

**ԵՐԵՎԱՆ ՏԵՂԱՆՎԱՆ ԾԱԳՄԱՆ ՇՈՒՐՋ**  
**Արմեն Պետրոսյան**  
**(Հնագիտության և ազգագրության ինստիտուտ)**

1) Երևան անվանումը հայկական համատեքստում միանգամայն թափանցիկ կառուցվածք ունի: Հնում երևան (յերևան, յերևանի տարբերակներով) նշանակել է՝ «երևումն և երևելի, յայտ, յայտնի». Երևան գալ, երևան համել «ի յայտ գալ, երևիլ, յայտնել»<sup>1</sup>: Արդի հայերենում արխահզմ է, որը կիրառվում է որպես հարադրությունների բաղադրիչ՝ երևան բերել, երևան գալ, երևան համել արտահայտություններում<sup>2</sup>: Դերջանից հայտնի է երևանս գյուղը<sup>3</sup>, ակնհայտորեն, նույնական երևանին, հոգնակի հայցական հոլովածնով, այսինքն՝ այդ բարի տեղանվանական կիրառությունը միակը չէ: Երեւ- արմատը բնիկ հայկական է<sup>4</sup>, որը հանդես է գալիս նաև այլ հայկական տեղանուններում՝ Երեւեալ, Երեւար: Ժողովրդական ավանդությունը մեջ երևանը կապվում է Նոյի անվան հետ՝ իբր Նոյն է այդպես կոչել առաջին ջրհեղեղից հետո երևացող անջուր վայրը<sup>5</sup>: Այսպիսով, երևան տեղանունը միանգամայն բնական կերպով կապվել է համահունչ բարին:

2) Բայց հայերենում այսքան թափանցիկ երևանը կարող էր լինել նաև մի հին, համահունչ անվան վերահմաստավորումը: Հնարավոր է այլ մեկնաբանություն՝ Երեւան > Երեւան, որտեղ Երեւ- արմատի տարբեր իմաստավորումներով:

3) Այսպիսով, երևանը կարելի է ստուգաբանել նաև վերոհիշյալ Երեւ-ից տարբեր, բայց նույնահունչ ինչ-որ հիմքից, -ան ածանցով կամ որպես բարդություն, -աւան վերջավորությամբ: Այդպիսի մի արմատ տեսնում ենք Երեւիլ «քույսերի ժամանականությունը» բառում, որն, ըստ Գ.Զահուկյանի, ծագում է հնդեվրոպական \*erebh- «մուգ գույն, մուգ կարմիր, դարչնագույն» արմատից<sup>6</sup> (գունանուններից կազմված տեղանունները լայնորեն տրածված են ամենուրեք):

3) Հնարավոր է պատկերացնել Երի + աւան տիպի մի բարդություն. չի բացառվում նաև Արի + աւան > Արեւան > Երևան մեկնաբանությունը: Այստեղ Երիկամ արի- հիմքը կարող է լինել մի ինչ-որ անվանում, ասենք՝ դիցանուն, ցեղանուն, կամ որևէ այլ բառ (հմնտ. Արա դիցանունը կամ հայ. արի «քաջ, այրական»):

4) Ուրարտական սեպագիր աղբյուրների ի հայտ գալուց հետո սկսեցին փորձեր արվել հայկական տեղանունների համար հնագույն ուրարտական հիմքեր փնտրելու ուղղությամբ: Մ.Նիկոլսկին կարծիք է հայտնել Երևանի՝ ուրարտական Eriaini Երկրանունից ծագելու վերաբերյալ<sup>7</sup>: Իրոք, սկզբունքը են հնարավոր է Երևանը կապել այդ տեղանվան հիմքին՝ Eri(a) + աւան. միանգամայն հնարավոր է Երևանը կապել նաև ուրարտական աղբյուրների Eriahi Երկրանվանը. հայտնի է նաև Ariaini Երկրանունը (-ini-ն և -hi-ն վերջավորություններ են): Պետք է նշել, որ այդ Երկրները գտնվել են Երևանից հեռու՝ Սևանի մերձակայքում և Շիրակում, բայց դա չի խանգարում այս ստուգաբանությանը՝ Երևանը կարող էր լինել, ասենք, այդ ցեղերից մեկի գաղթավայրը (հմնտ. օրինակ, Նախճաւան, որն, ըստ մի կարծիքի, կապված է հյուսիսկովկասյան նախծ- ցեղանվանը)<sup>8</sup>:

5) Երբ հայտնի դարձավ, որ ուրարտական Երեբունի ամրոց-քաղաքը գտնվել է Երևանի շրջանում, հավանական սկսեց համարվել Երևանի ծագումն Երեբունիից:

<sup>1</sup> Նոր բազիրք հայկագեան լեզուի, հ. Ա., Վենետիկ, 1836 (= Երևան, 1979), էջ 678:

<sup>2</sup> Է.Աղայան, Արդի հայերենի բացարտական բառարան, հ. Ա., Երևան, 1976, էջ 342:

<sup>3</sup> Թ.Խ.Դավթյան, Ա.Ս.Մելիք-Բախչյան, Յ.Խ.Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1986-2001, հ. 2, էջ 231:

<sup>4</sup> Հնդեվրոպական \*prep- (Յ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 49), կամ՝ \*kʷ'rep-, ըստ որոշ նոր բառարանների (Յ.Մարտիրոսյանի անձնական հաղորդման համաձայն):

<sup>5</sup> Ա.Ղանալանյան. Ավանդապատում. Երևան, 1969, 15 156-157:

<sup>6</sup> Գ.Զահուկյան, Ստուգաբանություններ, ՊԲՀ, 1991, N2, էջ 38:

<sup>7</sup> Մ.Բ.Հոկոլյան. Կլինօօբրազնություն հաճուս Հայաստանության մասին. Մատերիալներ պատմություններ, Երևան, 1986, ս. 97.

<sup>8</sup> Գ.Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 443, ծան. 30:

Առաջինն այդ մասին գրել է Մ.Իսրայելյանը<sup>9</sup>: Շուտով Երևանի Էրեբունից ծագելու տեսակետը դառնում է տիրապետող առաջատար ուրարտագետների շրջանում<sup>10</sup>:

Մեզ հասած ուրարտական աղբյուրներում Էրեբունի անունն ավանդված է 12 անգամ, երկու ձևով՝ Erbuni (10 անգամ) և Erebuni (2 անգամ). հնարավոր է ընթերցել և լր(e)b/runi: Erebuni-ն, որն ավելի քիչ հանդիպող ձևն է, ավելի է հիշեցնում Երևանը և ընդհանուր կիրառություն ունի:

Ուրարտական սեպագրում ե-ով հաղորդվել են նաև v-ն և w-ն, ս-ով՝ նաև o-ն<sup>11</sup>: Ուրարտերենում բառավերջի ձայնավորը հնչել է թույլ, որպես օ (ը). նման պատկեր է եղել և հայերենում, որտեղ բառավերջի ձայնավորն, ի վերջո, անհետացել է: Ըստ այդմ, Erebuni-ն, առանց վերջին ձայնավորի, կարող է վերականգնվել որպես Ervun-, Ervon-, Erevun- կամ Erebon-, ընդհանրացված ձևով՝ Er(e)nu/on- (v-ի փոխարեն կարող է պատկերացվել նաև w): Մյուս կողմից՝ ուն ուրարտ. ուղղական հոլովի վերջավորությունն է, և անվան հիմքը կարող էր լինել Er(e)nu/o-: Երկրորդ ե-ի ոչ պարտադիր լինելը կարող է ակնարկել նրա թույլ արտասանությունը:

Er(e)nu/o-ո-ից Երևան ուղղագիծ անցումը դժվար է պատկերացնել, և առաջարկվել են տարբեր հնարավոր զարգացումներ: Ըստ Ի.Դյակոնովի, սեպագիր Er(e)nu-ի իրական հնչողությունը պիտի լիներ \*Էրնս- կամ Er<sup>3</sup>nu-, որից և Ere(u) + աւան: Յավանական է համարվում նաև, որ հին Er(e)nu/on-ը ձևափոխվել և «ժողովրդական ստուգաբանությամբ» վերահնաստավորվել է -աւան վերջավորությամբ տեղանունների կամ Երևան բառի ազդեցությամբ<sup>12</sup>:

6) Մ.Իսրայելյանն առաջարկել է Էրեբունիի առավել տարածում ստացած ստուգաբանությունը՝ ուրարտ. irbu- «հափշտակել, առևանգել» և նման իմաստներով բառից, որպես «գրավում, նվաճում, հայթանակ»<sup>13</sup>: Եղել են Էրեբունիի և Երևանի ստուգաբանության մի քանի հոլյժ վարկածային կամ անհաջող կամ փորձեր<sup>14</sup>:

7) Արգիշտի լ-ը, Էրեբունի քաղաք-ամրոցի հիմնադիրը, այստեղ բնակեցրել է Խաթի և Ծուփանի Երկրներից բերված 6600 ռազմական մարդկանց: Արքան ասում է, որ ինքն է անվանել ամրոցն Էրեբունի անունով: Սա ուրարտական անվանաբանության մեջ բացառիկ է: Արքաները սովորաբար իրենց կառուցած քաղաքներն անվանել են իրենց կամ իրենց աստվածների անուններով (հմնտ. օրինակ, Argishtiinili, Haldini

<sup>9</sup> Մ.Իսրայելյան, Ուրարտական երկու նոր արձանագրություն. Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1951, N8, էջ 92, ծան. 2:

<sup>10</sup> F.König, Die Gründung der Stadt Erivan (ca 785 V.C.), Յանդէս ամսօրեայ, 1954, N7-8, S. 291 ff., Ի.Մ. Դյակոնով (Рецензия на книгу) Г.А. Меликышвили. Древневосточные материалы по истории народов Закавказья, I, Наури-Урарту. Вестник древней истории (այսուհետև՝ Վ.Դ.Ի), 1956, N2, с. 62. Առյունի՝ Մաтериалы к фонетике урартского языка. Вопросы грамматики и истории восточных языков. М.-Լ., 1958, с. 49, Բ.Բ. Պուտровский, Ванское царство (Урарту). М., 1959, с. 31. Ն.Յարությունյան, Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջ, ՊԲՀ, 1959, N2-3, էջ 78 հտն. հարցի պատմությամբ:

<sup>11</sup> Յայ-ուրարտական բառային և անվանաբանական զուգափառություններում այս համապատասխանությունների վերաբերյալ տես Գ.Զահուլյան, Յայոց լեզվի պատմություն, էջ 430-431:

<sup>12</sup> Ն.Յարությունյան, նշվ. աշխ., էջ 80, ծան. 8, Գ.Զահուլյան, նշվ. աշխ., էջ 415:

<sup>13</sup> Մ.Իսրայելյան, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 12 հտն.:

<sup>14</sup> Այսպես, Յ.Կարագյոյանը Էրեբունիի վերջին մասը ստուգաբանում է ըստ որոշ թրակյան տեղանունների -Յօն վերջավորության, առաջին մասը կապում է հայերեն Երանի բառի արմատին և այդ հիբրիդն անվանում «հնդեվրոպական-հայկական», տես Օ.Օ.Կարազյան. Փրականց և այլ առաջնային հանդեցնում է խուռաւրարտական եւրոպական արմատին, իբր դրափոխությամբ (Ղ.Սարգսյան, Էրեբունի անվան մեկնաբանման հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, N8, էջ 53-56): Մեկ այլ հոլյժ վարկածային ստուգաբանություն (խուռ. Ենթադրյալ \*eribu- «արծիվ») տես Վ.Վ.Ivanov, Comparative Notes on Hurro-Urartian, Northern Caucasian and Indo-European. UCLA Indo-European Studies. Vol.1. Los-Angeles, 1999 ([http://www.humnet.ucla.edu/pies/pdfs/IESV1/VV1\\_Horse.pdf](http://www.humnet.ucla.edu/pies/pdfs/IESV1/VV1_Horse.pdf)), ո. 314: Զ.Ռասելը, որի աշխատություններում ամեն հայկական Երևույթ հանդեցվում է ինչ-որ իրանական ակունքների, առանց որևէ հիմնավորման մերժում է Էրեբունիի կապը Երևանի հետ և վերջինս հանդեցնում իրանական revand «առատ, մեծաշուր» բառին (Զ.Ռասել, Առաքելական աստուգածաբանութիւն. Յայաստանը և քրիստոնյա արևելքը, Երևան, 2000, էջ 45-46):

URU և այլն): Այս բացառիկ անվանումը, թերևս, կարող է մատնանշել Երեբունու վերաբնակիչների բացառիկ կարգավիճակը: Ըստ առավել հավանական մի տեսակետի, այդ վերաբնակիչները պիտի որ անատոլիական՝ լուսական ծագում ունենային<sup>15</sup>: Այդ դեպքում, Երեբունին կարող է մեկնաբանվել ըստ անատոլիական անվանաբանության տվյալների<sup>16</sup>:

Անատոլիական համատեքստում *Erebuni*-թերևս համադրելի է խեթ. *arawa-* «ազատ» (ինչ որ բանից), *arawahhi-* «ազատել, ազատ դարձնել», *arawes-* «ազատ դառնալ», *arawanni-* «ազատ»՝ հակադրված անազատին<sup>17</sup>: Յայտնի է *Arauwanna* (տարբերակներ՝ *Arawanna*, *Arawunna*) քաղաքը *Պափլագոնիայի* մոտ, որի անունը մեկնաբանվում է որպես «Ազատ քաղաք»<sup>18</sup>: *Arawa-* «ազատ, ազատ(վ)ել» արմատը համապատասխական է: Արևմտափոքրասիական *Lihkha* Երկրից հայտնի է՝ Էրեսա քաղաքանունը, որը մոտ է Երեբունին (-ուն, ինչպես ասվեց, ուրարտական ածանց է) և համարյա նույնական Երևանին: Ստեփանոս Բյուզանդացու մոտ այդ անվանումը մեկնաբանվում է որպես՝ Էլեսթերա «ազատ, անկախ» (սրա հունական գուգահեռն է, այսպիսով,՝ Էլեսթերա քաղաքն Ատիկայում հմնտ. և ոուս. Շլոբոդա «Ազատ /հողագործների բնակավայր/», հայ. Ազատ քաղաք<sup>19</sup>):

8) Երեբունի ամրոց-քաղաքը կառուցվել է *Etiuni* կամ *Etiuni* ընդհանուր անունով կոչվող նվաճված Երկրների կոնֆերացիայի կենտրոնական՝ *'Aza* կամ՝ *'Asa* Երկրում: *Etiuni*-ն հիմնականում համապատասխանում է հետագա Մեծ Յայքի Այրարատ նահանգին, *'Aza*-ն՝ Այրարատի սրտի՝ Արարատյան դաշտի Արմավիրից Երևան ընկած տարածքներին: Այրարատը եղել է Մեծ Յայքի քաղաքական, կրոնական և նշակութային կենտրոնը ամենավաղ ժամանակներից: Յայոց համարյա թոլոր մայրաքաղաքները՝ Արմավիրից մինչև Երևան, գտնվել են Արարատյան դաշտում: Ըստ մի տեսակետի, Եթիունիի հին բնակչությունը խոսել է հայերենով<sup>20</sup>: Ըստ մեկ այլ տեսակետի, Երեբունիի՝ արևմուտքից բերված բնակիչները, գոնե մասամբ, կարող էին հայկական ծագում ունենալ<sup>21</sup>: Այսպիսով, հնարավոր է, որ Երեբունի անվանումը հայկական ծագում ունենար:

Սեպագիր *Erebuni*-ն կարելի է փորձել համաձայնեցնել Երևանի հիշյալ հայկական ստուգաբանությունների հետ՝ համադրել Երևան բարի արմատին կամ ստուգաբանել այլ հնդեվրոպական հիմքերի հայկական հնարավոր արտացոլումների միջոցով (օրինակ, \*erebh-, \*rebh- ևն): Յատուկ հիշենք արդեն քննարկված հնագույն հայերեն \*երեւ- «կարմրավուն» արմատը (Երեբունի թլուրն, իրոք, կարմրավուն է):

9) Անվանը որևէ իմաստ վերագրելու համար անհրաժեշտ են կողմնակի տվյալներ, որոնք, այս դեպքում, կարող են տալ Երեբունի թլորի ժամանակակից անվանումները: Այն կոչվում է Արինբերդ (այդուն բարի բարբառային ձևից), որից է ծագում նրա թուրքերեն Ղանլիթափա «Արյունոտ թլուր» անվանաձևը<sup>22</sup>: Յետաքրիր է, որ հայկական անվան մեջ դեռևս պահպանվել էր տեղում ամրոց-բերդ լինելու հիշողությունը, որը, ինչպես վկայում է թուրքական ձևը, հետագայում նորացվել է: Թլորից 1,5կմ դեպի հյուսիս-արևմուտք է գտնվել Ղանլիթափա գյուղը, որի տարածքը

<sup>15</sup> Г.А.Мелукашвили. К вопросу о хетто-цупануйских переселенцах в Урарту. ВДИ, 1958, N2, նույնի՝ К изучению древней восточноалоазийской этнонимики. ВДИ, 1962, №1:

<sup>16</sup> Ա.Պետրոսյան. Յայոց ազգածագման հայցեր. Երևան, 2006, էջ 34-42:

<sup>17</sup> Այս բառերի վերաբերյալ տես J.Puhvel, Hittite Etymological Dictionary: Trends in Linguistics. V. 1-2, Berlin, New York, 1984, p. 119:

<sup>18</sup> E.Laroche, Hittite arawa- “libre.” Hommage à George Dumézil. Bruxelles, 1960, p.124.

<sup>19</sup> Յայոց ավանդություն «Ազատ քաղաքի» մի օրինակ է Արշակ II-ի կառուցած Արշակավանը, որտեղ, արքայի հրամանով, ազատ ապրելու իրավունք էր տրվում հանցագործներին, տերերից և հարկերից փախած թոլոր հալածյալներին (Փակստոս, Դ.Ժ.Բ. Խորենացի, Գ.ԻՒ): Յայտնի է և «Ազատ քաղաքի» տեղանվանական կիրառությունը: Այդպես են կոչվել Երկու ավերակ քաղաքատեղի Սյունիքում (Սոքք և Գեղարքունիք գավառներում, հմնտ. և Ազատն գյուղատեղին Գողթնում), տես Թ.Խ.Յակոբյան, U.S.Մելիք-Բախչյան, Յ.Խ.Բարսեղյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 38, 42:

<sup>20</sup> Ա.Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 131-142:

<sup>21</sup> И.М.Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 233, Գ.Սարգսյան, Ուրարտական տերությունը և հայերը. Ուրարտու-Յայատան, Երևան, 1988, էջ 117-118:

<sup>22</sup> Թ.Խ.Յակոբյան, U.S.Մելիք-Բախչյան, Յ.Խ.Բարսեղյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 443:

մտնում է Երևանի շրջագծի մեջ<sup>23</sup>: Ըստ այդմ, հնարավոր է կապ Ենթադրել Երեբունի անվան և «արյուն» կամ «արնագույն» իմաստների միջև:

Այսուհետեւ ծագում է հնդեվրոպական \*esH₂- արմատից, -h₂t₇ < \*iōn- ածանցով<sup>24</sup>: Տեսականորեն հնարավոր է, որ երեսուն-ն լիներ արևո-ի հնագույն հայերեն վիճակի ուրարտական ընկալման սեպագիր արտացոլումը (ուրարտերեն-հայերեն համընկումներում կան ե/ա համապատասխանության այլ դեպքեր, Հ-ն կարող է հաղորդվել Ե-ով, ուրարտերենում՝ Ե-ն և Ի-ն, իսկ հայերենում՝ իւ և Եւ Երկրարբառները հերթագայում են):

Իհարկե, հնարավոր է, որ օտարալեզու Եր(ե)աս/օն- անվանումը հետագայում է միայն վերահմաստավորվել հայ. արևո «արյուն» բառով:

Երեբունի-Արինբերդ նույնությունը կարելի է մեկնաբանել որպես փաստարկ Երևանի և Երեբունի կապի դեմ: Վերջինս, հնարավոր է, որ պահպանվել է միայն Արինբերդ և թարգմանված ձևով՝ Ղանլիթափա անվանումներում: Ինչևէ, տեսականորեն չի կարելի բացառել, որ տեղանունը կարող էր տարածվել, երկու էտապով, դեպի հյուսիս-արևմուտք. առաջին հանգրվանը հետագայում վերանվանվել է թուրքերեն մոտավոր թարգմանությամբ, իսկ ավելի մեծ ու նշանավոր Երկրորդը՝ պահպանել հին անունը, վերահմաստավորվելով Երևան բառով:

10) Այս ստուգաբանությունները լեզվաբանորեն միանգանայն հավանական են: Երեբունի և Երևան անվանումները շատ նման են իրար, և շատ հավանական է, որ Երկրորդը ծագում է առաջինից: Եթե Երեբունու հայերեն ստուգաբանությունը ճիշտ է, ապա այն կառուցվել է հայախոս Երկրամասուն, հայերեն անուն կրող բլիի Վրա, կամ հայերեն անունը դրել են քաղաքը կառուցողը կամ այլ Երկրամասերից բերված նոր բնակիչները: Եթե Երեբունին հայկական անվանում չէ, ապա այն հետագայում վերահմաստավորվել է հայերեն արյուն և Երևան բառերով:

Գիտության մեջ ճիշտ պետք է քննարկել հնարավոր բոլոր լուծումները: Արդյո՞ք կարելի է միարժեքորեն պնդել, որ Երևան անվանումը ծագում է Երեբունիից: Դա ընդամենը շատ հավանական է, բայց ոչ միակ հնարավորությունը:

Այսպիսով, մեր խնդրում պետք է առանձնացնել մի քանի մասնավոր հարց:

ա. Երևան անվան ստուգաբանությունը.

բ. Երեբունի անվան ստուգաբանությունը.

գ. Երևան և Երեբունի անվանումների միջև կապը.

Առաջարկված բոլոր լուծումներն ել, որոշակիորեն, վարկածային են և բոլոր հարցերի համար հնարավոր են իրարամերժ պատասխաններ: Առավել ճշգրիտ արդյունքներ ի հայտ կգան գիտության հետագա զարգացման ընթացքում:

<sup>23</sup> Նույն տեղում, հ. 3, էջ 515:

<sup>24</sup> Հ.Աճառյան, նշվ. աշխ., հ.1, Երևան, 1973, էջ 316-317, գ.Զահուկյան, նշվ. աշխ., էջ 166: